Ա. Պ. ՓՈՂԱԴՅԱՆ

ՔՐԴԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԱՐԿԱԾԻ ՇՈՒՐՋԸ

(ըստ արաբական աղբյուրների)

Արաբական նվաճողական արշավանքների ավարտից հետո զգալիորեն մեծացավ արաբների հետաքրքրությունը խալիֆայության հպատակ ժողովուրդների և երկրների պատմության ու մշակույթի նկատմամբ։ Եթե առաջին չորս խալիֆաների (632—661 թթ.) և Օմայանների (661—750 թթ.) օրոք հասկանալի պատճառներով արաբները հստակ պատկերացում չունեին նվաճված տարածքների և նրանց բնակիչների մասին, ապա Բաղդադի Աբբասյան դինաստիայի (749—1258 թթ.) տիրապետության ժամանակաշրջանում, ելնելով արքունիքի ռազմաքաղաքական և տնտեսական շահերից, քիչ թե շատ փոխվեց իրավիճակը։ Այս շրջանում սկզբնավորվող (հիմնականում VIII դ.) արաբական պատմաաշխարհագրական գրավոր բազմաթիվ սկզբնաղբյուրներում, բացի խալիֆայության ռազմաքաղաքական անցուդարձերի և աշխարհագրական մանրամասն նկարագրություններից, փորձեր են կատարվել նաև հպատակ մի շարք ժողովուրդների էթնիկական ծագումն ու ձևավորումը մեկնաբանելու ուղղությամբ։ Պետք է ենթադրել, որ այս եբևույթը պատահական բնույթ չէր կրում և բխում էր արաբական խալիֆայության ընդհանուր քաղաքականությունից, որի նպատակն էր հիմնավորել խալիֆայության տիրապետության «օրինականությունը» արաբների և հպատակ ժողովուրդների կարծեցյալ էթնիկական ընդհանրությունները։ Ժողովուրդների էթնիկական ծագման հարցերի շահադետ պարզաբանումները արաբ միջնադարյան գործիչների կողմից կոչված էին ծառայելու ոչ միայն արաբական տիրապետության ամրապնդման, այլև իսլամի՝ նոր կրոնի տարածման նպատակին։ Ուստի մահմեդական միջնադարի գրեթե բոլոր հեղինակներն այս հարցում ևս մեծապես դիմել են Աստվածաշնչի և դիցաբանության ավանդությունները։

սերի նյութերին, առաջ քաշելով որոշ ժողովուրդների ինչպես արաբական, այնպես էլ սեմական ծագումը։

Այս տեսանկյունից արաբ հեղինակների ուշադրությունից չէին կարող վրիպել իրանական ժողովուրդները, դրանց թվում, մասնավորապես, քրդերը։ Ովքեր են եղել քրդերի նախահայրերը և երբվանից են նրանք «քուրդ» անվան տակ հանդես եկել պատմության թատերաբեմում։ Այդ մասին էլ արաբ հեղինակները հավաքել և գրառել են մի քանի վարկածներ։

Քրդերի էթնիկական ծագման պրոբլեմը, ինչպես ցույց է տալիս արաբական պատմաաշխարհագրական գրականության ուսումնասիրությունը, ի տարբերություն խալիֆայության մյուս ժողովուրդների, առավել լրջորեն է մտահոգել արաբ հեղինակներին։ Պետք է ենթադրել, որ այս հանգամանքը մասամբ կապված էր այն փաստի հետ, որ քրդերը ապրելով աշխարհագրական կարևոր դիրք ունեցող տարածքների վրա, զգալի դեր էին խաղում արևելյան խալիֆայության ռազմաքաղաքական կյանքում։

Մեր տրամադրության տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ քրդերի էթնիկական ծագման պրոբլեմը արաբական սկզբնաղբյուրներում ունեցել է տևական պատմություն և շոշափվել է մոտավորապես VIII դ.։ Ինչպես արդեն նշվեց, հայտնի պատճառներով արաբ հեղինակները աշխատում էին հիմնավորել քրդերի արաբական ծագման գաղափարը, որը արտացոլվել է քրդագիտական որոշ գործերի մեջ։ Դրան, օրինակ, թռուցիկ կերպով անդրադարձել են Ն. Մառը, Վ. Նիկիտինը, Վ. Մինորսկին, Մ. Զաքին, Մ. Օրանգը, Ռ. Յասիմին, Ռ. ալ-Ֆիլը, և ուրիշներ[1]։

Սույն վարկածին հատուկ հոդված է նվիրել սովետահայ քրդագետ Դ. Ակոպովը[2]։ Սակայն ընդհանուր գծերով ներկայացվելով քրդերի արաբական ծագման վարկածը, նրա տեսադաշտից դուրս են մնացել արաբ մատենագիրների և աշխարհագիրների զգալի նյութեր։ Բացի այդ, իր շարադրանքում բավարարվելով հայտնի մի քանի վկայակոչություններով, Դ. Ակոպովը վերլուծել է զուտ էթնիկական կարգի խնդիրներ, կանգ է առել առանձին էթնոնիմների վրա[3]։

Ներկա հոդվածը շարադրելու համար օգտագործվել են IX—XV դդ. արաբալեզու աղբյուրների նյութերը, որոնց զգալի մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ։ Այդ նյութերի լույսի ներքո վարկածը դիտվում է գիտական նոր կողմով, վեր են հանվում նրա առաջացման և գոյատևման դրդապատճառները։

Քրդերի արաբական ծագման միջնադարյան վարկածին, որքան հայտնի է մեզ, առաջին անգամ անդրադարձել է հայտնի ծագումնաբան, մի քանի գործերի հեղինակ Սուհայմ իբն Հաֆսս Աբու ալ-Յակզզանը[4] (VIII դ.)։ Աբու ալ-Յակզզանի (որի աշխատությունները մեզ չեն հասել) այդ հիշատակությունը արաբ հեղինակները մատնանշել են քրդերի ծագման առնչությամբ[5]։ Նրանց տվյալներով Աբու ալ-Յակզզանն իր «Մեծ ծագումնաբանություն» (Քիթաբ ան-նասբ ալ-քաբիր) գրքում ընդգծել է, որ իբր քրդերի նախահայրն է ոմն «Քուրդ իբն Օմար իբն Ամր իբն Սասսան»[6]: Այս ծագումնաբանությունը որոշ հավելումներով և փոփոխություններով տեղ է գտել հետագա դարերի արաբական աղբյուրներում։ Օրինակ VIII—IX դդ. հեղինակ Հիշամ ալ-Քալբին (Իբն ալ-Քալբին) իր նույնանուն երկում (Քիթաբ ան-նասբ ալ-քաբիր), որը նույնպես նվիրված է արաբական ցեղերի տոհմաբանությանը, առաջ է քաշում քրդերի ծագման նոր տարբերակ։ Նրա կարծիքով քրդերի նախահայրն է «Քուրդ իբն Օմար Ամր Մա աս-Սամա»-ն[7]։ Երբեմն Մա աս-Սամայի փոխարեն «Ամրու Մուզայիկյա»[8], որոնք, ըստ արաբ. ծագումնաբանության, նույն անձն են։

Արաբ հեղինակներին ամենից առաջ հետաքրքրել է «քուրդ» էթնոնիմը, որի բացատրության ճանապարհին սխոլաստիկ գաղափարախոսությունը՝ կրոնական ավանդությունները մղել է իդեալիստական հիմնավորման։ «Քուրդ» տերմինը, դիտելով որպես առանձին էթնիկական խմբի ինքնանվանում, նրա մեջ մարմնավորվել են այդ անունը կրող առասպելական մի մարդու (քուրդ), որի անունով էլ, իբր թե, նրա սերունդը կոչվեց քուրդ, «الكرد — քրդեր — أكراد» (հոդ. թիվ. աքրադ)։ Այս մեկնաբանության հիմնավորման համար արաբ հեղինակները դիմել են նախաիսլամական շրջանում ոչ լայն տարածում ստացած «Քուրդ» كرد անձնանվանը։

Աբու ալ-Յակզզանի և ալ-Քալբիի տարբերակներում քուրդ անձնանվանը հաջորդող անունները մեզ տանում են հեռու՝ ակամայից առնչվելով բուն արաբական էթնոսի խնդիրների հետ։ Միջնադարյան արաբ հեղինակների պատկերացումներով արաբների էթնիկական բաղադրամասերը կազմված են եղել երկու հիմնական խմբերից, որոնք առասպելական լինելով՝ ունեն աստվածաշնչային երանգներ։ Ըստ այդ տվյալների, հյուսիսային արաբների նահապետը Իսմայիլն է, աստվածաշնչային Աբրահամի որդին, իսկ հարավային արաբներինը՝ Յակթանը (Կահթանը)։ Այս երկու խմբերից առաջինը համարվում է արա-

բացած արաբ (ալ-արար ալ-մուսթաարիբա), իսկ երկրորդը իսկական արաբ (ալ-արաբ ալ-արիբա)։ Նրանց մեջ մտնող բազմաթիվ ցեղերն ու ցեղային միությունները ունեին իրենց անվանումները, որոնք հետզհետե տարածվելով արաբական թերակղզում վերանվանվեցին նոր անուններով[10]։

Քրդերի արաբական ծագման հարցում առաջարկած տոհմածառերը իրենց տարբերակներով վերաբերում են երկու խմբերին էլ։ Օրինակ, Աբու ալ-Յակզանի տարբերակում բերված անունները մտնում են Մուդդար ցեղային միավորման մեջ, որը համարվել է արաբացած արար[11], իսկ ալ-Քալբիի տարբերակի անուններին հանդիպում ենք իսկական արաբների տոհմածառի մեջ[12]։

Արաբական աղբյուրներում այս տարբերակները հետզհետե ճյուղավորվել և ավելացվել են նոր անուններով, որոնց երբեմն չենք հանդիպում արաբական տոհմաբանությանը նվիրված հիմնակազմ գործերում։ Օրինակ, Իբն Դուրայդը (IX դ.) նույնպես նշելով քրդերի արարական ծագումը, նրանց նախահայրն է համարել «Քուրդ իբն Մարդ։ իբն Օմար իբն Ամր»-ին[13]։ Ինչպես երևում է այս տարբերակում, Մարդը նոր անուն է։ Սույն տոհմաբանությունը որոշ անունների նմանությամբ հանդիպում է Իբն ալ-Ջավանիի, ալ-Արկաթիի և այլոց գործերում։ Քրդերին համարելով արաբ այս խոշոր ցեղային միության մի ճյուղ, նրանք տալիս են ամբողջ տոհմածառը ընդհուպ մինչև արաբացած արաբների առասպելական Ադնան նախահորը։ Այդ ծագումնաբանության համաձայն քրդերը համարվում են «Քուրդ իբն Ամրու իբն Սաասաա իբն Մուավիյա իբն Բաքր իբն Հավազին իբն Մանսուր իբն Աքրամա իբն Խաֆսսա իբն Կայս իբն Այլան իբն Մուդդար իբն Նիզար իբն Մաադ իբն Ադնան»-ի սերունդը[14]։ Իսկ իբն Ռասուլն իր հերթին, որոշ չափով կրկնելով Աբու ալ-Յակզանին, ընդգծում է, որ նրանք «Սաասաա Վասիկ իբն Մոմնաբահ»-ի սերունդն են[15]։

Մահմեդական միջնադարում մշակված այլևայլ տարբերակներ գրի է առել եգիպտացի պատմիչ ալ-Մակրիզին։ Ըստ դրանց. «քրդերը սերում են Քուրդ իբն Մուրդ (ոմանց մոտ Մարդ է,—Ա. Փ.) իբն Ամրու իբն Սաասաա իբն Մուավիյա իբն Բաքր իբն Հավազինից։ Ասում են, թե նրանք Ամրու Մուզայիկյա իբն Ամր Մա աս-Սամայի սերունդն են։ Ասում են, թե նրանք (քրդերը,—Ա. Փ.) Համիդ իբն Թարիկ-Համիդ իբն Ջուհայր իբն ալ-Հարիս իբն Ասադ իբն Աբդ ալ-Ազա իբն Կասսա իբն Քիլարի սերունդն են»[16]։ Նման տարբերակներին ալ-Մակրիզին անդրադարձել է իր մեկ ուրիշ աշխատությունում[17]։

Քրդերի արաբական ծագման վարկածն իր խայտաբղետ պատումներով աստիճանաբար տարածվեց խալիֆայությունում, որին անդրադարձան վաղ շրջանից սկսած արաբ ականավոր հեղինակներ ալ-Իսթախրին[18], Իբն Հաուկալը[19], ալ-Իդրիսին[20], Իբն Յուսուֆ Արդ ալ-Բառը[21], Աբու ալ-Բարաքաթ ան-Նասաֆին[22], Իբն Խալիքանը[23], Իբն Մանղուրը[24], Իբն ալ-Վարդին[25], Աբու ալ-Ֆիդան[26], Իբն Խալդունը[27], ալ-Հանբալին[28], ադ-Դիմաշկին[29], ալ-Ֆիրուզաբադին[30], Իբն Բաթութան[31] և ուրիշներ։ Այն տեղ գտավ նույնիսկ արաբական միջնադարյան պոեզիայում։ Ուշագրավ է մեջբերել անհայտ բանաստեղծի հանգավորված բանաստեղծությունը, որը կրկնում են տարբեր հեղինակներ, թարգմանաբար հնչում է հետևյալ կերպ. «Կյանքովդ եմ երդվում ես, քրդերը ոչ թե որդիներն են (սերունդը) պարսկական, այլ քուրդ իբն Ամրու իբն Ամր»-ի[32]։

Քրդերի էթնիկական ծագման հարցին նվիրված արաբական սկզբնաղբյուրներում գոյություն ունեցող վարկածների և նրանց հետ առնչվող նյութերի ուսումնասիրությունը հիմք է տալիս հանգելու այն եզրակացության, որ նրանց արաբական ծագումը իր մի քանի տարբերակներով ամփոփ և վերջնական ձևակերպում ստացավ X դ. արաբ հռչակավոր գիտնական ալ-Մասուդու կողմից։ Նա հավաքել և գրառել է միջնադարյան ու դիցաբանական վարկածների մի ամբողջ շարք։ Նրա շարադրանքից երևում է, որ նա ոչ միայն շփվել է քրդերի հետ, այլև բուն քրդական իրականությունից ևս նյութեր է գրի առել։ Այլ կերպ ասած, ալ-Մասուդին այն գործիչներից է, թերևս միակը մեր կարծիքով, որ քաջատեղյակ է եղել քրդական իրականությանը և քրդերի էթնիկական ծագմանը վերաբերող վարկածներին։ Ալ-Մասուդին այդ խնդիրներին անդրադարձել է իր հիմնակազմ «Մուրուջ ազ-զահաբ վա մաադին ալ-շաուհար» և Քիթաբ աթ-թանբիհ վա ալ իշրաֆ» աշխատություններում։ Հենց սկզբից էլ նա միանգամայն ճիշտ է ընդգծել, որ քրդերի ծագման շուրջ գոյություն ունեն խիստ տարաձայնություններ և զանազան կարծիքներ[33]։

Եթե վաղ և նույնիսկ ուշ շրջանի արաբ հեղինակներից շատերը հաճախ կառչել են «Քուրդ» առասպելական անձնանունից, ապա ալ-Մասուդու երկերում դրան մեծ կարևորություն չի տրվել։ Նրա երկերում փորձ է կատարվում քրդերի ծագումը սերել արևելյան խալիֆայության տարածքում հաստատված հայտնի արաբ ցեղային միավորումներից։ Նրանցից ի մի բերելով մի քանիսը, ալ-Մասուդին նշում է, որ «Մարդկանցից ոմանք գտնում են, թե քրդերը [սերվել են] Ռաբիաա

իրն Նիզար իրն Մաաղ իրն Ադնանի Բաքր իրն Վաիլից... որոշ մարդիկ գտնում են, որ նրանք (այսինքն քրդերը սերվել են,—Ա. Փ.) Մուդդար իրն Նիզարից և Քուրդ իրն Մարդ իրն Սաասաա իրն Հավազինի սերունդն են... ոմանք էլ կարծում են, թե նրանք (քրդերը—Ա. Փ.) Ռաբիաայից և Մուդդարից են...»[34]։ Այնուհետև ալ-Մասուդին ավելացնում է, ընդգծելով հետևյալը. «Ինչքան էլ, որ ասացինք քրդերի մասին, ապա նրանց ծագման վերաբերյալ մարդկանց մեջ ամենատարածվածը և ամենահշմարիտը այն է, որ նրանք սերվել են Ռաբիաա իրն Նիզարից...»[35]։ Կատարված մեջբերումից ակնհայտորեն երևում է, որ ալ-Մասուդու մոտ գլխավորապես շեշտվում են արաբական ցեղերի առասպելական նախահայրերը՝ Ռաբիաա իրն Նիզարը և Մուդդար իրն Նիզարը, որոնք ըստ միջնադարյան ծագումնաբանների, եղբայրներ են և արաբացած արաբների Ադնան նահապետի ծոռները[36]։

Քրդերի արաբական ծագումն իր բազմազան տարբերակներով տարածվել է նաև Այյուբյանների[37] վրա (1169 թ. մինչև XV դ. վերջը)։ Ակնհայտ է, որ Այյուբյան դինաստիան ի դեմս Սալահ ադ-Դինի չափազանց ակտիվ գործունեություն ծավալեց մահմեդական միջնադարում և փառաբանվեց հատկապես խաչակիրների դեմ պայքարում։ Այս խնդրի մանրամասնությունների մեջ մտնելը ոչնչով չի փոխում սպասվող պատասխանը. իսկ դա հանգում է այն բանին, որ Այյուբյաններին վերագրելով արաբական ծագում, դրանով արաբ հեղինակները աշխատել են «օրինական» հիմքի վրա դնել այն ծառայությունները, որ վերոհիշյալ տոհմածառը՝ հատկապես Սալահ ադ-Դինը, մատուցեց միջնադարյան մահմեդական աշխարհին[38]։

Այսպիսով, զուգահեռ անցկացնելով, ինչպես նշվեց, քրդերի «քուրդ» էթնոնիմի և ոմն «Քուրդ» անձնանվան, ինչպես նաև առանձին ցեղային միությունների և նրանց նախահայրերի հետ, արաբ հեղինակները ձգտել են լրտցուցիչ մանրամասնություններով հիմնավորել իրենց տեսակետը։ Հետևելով արաբական աղբյուրների վկայակոչությունների ընթացքին, պետք է ենթադրել, որ միայն «Քուրդ»-անունը ըստ երևույթին չի բավարարել համոզիչ կերպով արաբ համարելու այլալեզու լեգենդիկական այդ խմբին։ Այս հարցին, ինչ որ չափով հավանական պատասխան տալու համար, այսինքն՝ թե քրդերը-նախկին արաբները, ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքների հետևանքով մեկնեցին Արաբիայից և բնակվեցին այլազգիների մեջ, արաբ հեղինակները դիմել են իրենց հայտնի պատմական իրադարձություններին։ Մեզ արդեն ծանոթ ալ-Քալբին առաջիններից է, որ այդ փաստը կապել է Եմենի Մարիբ ամ-

բարտակի փլուզման հետ։ Նա գրում է, որ քրդերը, իբր, «Ընկան (հաստատվեցին) այն տարածքը, որում [այժմ] գտնվում են, երբ հեղեղը խորտակեց ալ-Արիմը և ցրվեց Եմենի (ալ-Յամանի) բնակչությունը»[39]։

Հայտնի է, որ Եմենի հսկա այս ամբարտակը, որը Մարիբ քաղաքը և նրա շրջակայքը պաշտպանում էր լեռնային ջրհեղեղներից կառուցվել էր Սաբա թագավորների կողմից։ VI դ. (մոտավորապես մ.թ. 542—570 թ. արանքում) ջուրը ճեղքեց ամբարտակը, քանդելով այն՝ խորտակեց նաև Սաբացիների մայրաքաղաքը՝ Մարիբը և շրջակա շինությունները[40]։

Ամբարտակի փլուզումը, որի ջրով ոռոգվում էին հողերը, հսկայական վնասներ հասցրեց երկրի գյուղատնտեսությանը[41]։ Թեև ջանքեր գործադրվեցին այն վերականգնելու համար, բայց դրանից հետո Եմենում ըստ երևույթին ոռոգման սիստեմը և տեխնիկան խիստ տուժեց[42]։ Դրա հետևանքով կրկին սկսվեց հարավային Արաբիայից (Եմենից) արաբական ցեղերի արտագաղթը դեպի հյուսիս, Սիրիա, Միջագետք և այլուր։ Այս արտագաղթերը և Եմենում Հիմյար թագավորության անկումը առավելապես պայմանավորված էին նաև երկրում առևտրի անկման հետ[43]։ Ահա պատմական այս իրադարձությունների հետ է առնչել ալ-Քալբին քրդերի ենթադրյալ արտագաղթը Եմենից՝ Մարիբի ամբարտակի փլուզման հետևանքով։ Ուշագրավ են այդ առթիվ ալ-Մասուդու երկում առաջ քաշած պատճառաբանությունները։ Նա գրում է, որ իբր քրդերը «հին ժամանակներում բաժանվեցին արաբներից, հաստատվեցին լեռներում և հովիտներում զանազան իրադարձությունների հետևանքով, ուր որպես հարևաններ ապրեցին քաղաքի և շինությունների (գյուղերի) աջամ[44] ու ֆուրս[45] ժողովուրդների հետ։ Նրանք մոռացան իրենց լեզուն (արաբերենը,—Ա. Փ.), խոսեցին աջամների լեզվով։ Եվ յուրաքանչյուր քրդական ցեղ ունի իր խոսվածքը (լեզուն) քրդերենով...»[46] Արաբիայից քրդերի դուրս գալը ալ-Մասուդու մոտ կապվել է նաև արաբ «Ղասսանիների[47] կռիվների» հետ[48]։ Իսկ մեկ այլ պատճառը, ըստ ալ-Մասուդու, այն է, որ քրդերը հաստատվեցին «լեռներում արոտավայրեր և ջուր հայթայթելու նպատակով մոռացան արաբերեն լեզուն՝ ուրիշ ժողովուրդներին հարևանդառնալու հետևանքով»[49]։ Այս հարցին ալ-Մասուդին անդրադարձել է իր «Քիթաբ աթ-թանբիհ վա ալ-իշրաֆ» աշխատությունում, ուր ընդգծել է գրեթե նույն միտքը, որ քրդերը զանազան հակամարտությունների հետևանքով շատ վաղուց են դուրս եկել Արաբիայից և հաստատ-

վելով «աջամների հողում, տարածվեցին, մոռացան իրենց լեզուն և [բաղմանալով] դարձան համայնքներ ու ցեղեր»[50]։

Այս առթիվ պետք է նշել հետևյալը. ինչպես հայտնի է, երբ ուժեղացավ պարսկահռոմեական մրցակցությունը, Արևելքում առևտրական ուղիներում ձևավորվեցին արաբական իշխանություններ՝ Պետրան (Նարաթիներ-զոյատևեց մինչև 106 թ.) և Պալմիրան[51]։ Դա նպաստեց արաբական ցեղերի ակտիվացմանը, և նրանք հետզհետե տարածվեցին կայսրության ու Իրանի սահմանամերձ գոտիներում։ 272 թ. Պալմիրայի անկումից հետո Սիրիայում իշխանության գլուխ անցան արաբ Ղասսանիները, որոնք հանդիսանում էին Բյուզանդիայի կամակատարներ[52] և օգտագործվում էին բեդուինների հակահարված տալու համար։ Նույն ժամանակաշրջանում (III դ.) ակտիվացան Իրաքում հաստատված արաբները և նրանց հաջողվեց հիմնադրել Լախմիների իշխանությունը։ Այս շրջանում է, որ արաբական ցեղերը տարբեր նկատառումներով սկսում են Միջագետքից շարժվել և խորանալ դեպի արևմուտք։ Ապա ժամանակ առ ժամանակ օգտվելով Սասանյան Իրանի թուլությունից, նրանք ոչ միայն սկսում են ուժեղացնել ասպատակությունները, այլև իրենց հոտերով տարածվում Միջագետքի հյուսիս և արևելյան շրջաններում[53]։

Ինչպես դժվար չէ նկատել քրդերի արաբական ծագումը արաբ հեղինակները կատարելագործել են իրենց հայտնի իրադարձություններով նախաիսլամական շրջանում դեպի Սասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության սահմանները արաբական ցեղերի տեղաշարժերով։ Իր զանազան տարբերակներով սույն ծագումնաբանությունը սկսած IX—X դդ. որոշ արձագանք գտավ նաև խալիֆայության տարբեր շրջաններում ցաք ու ցրիվ քրդական ցեղերի մեջ։ Այդպիսի վկայություններ են հաղորդում Իբն Հաուկալը[54] Քերմանի լեռնաբնակ քրդերի և ալ-Իսթախրին[55] Ֆարս նահանգի քրդական կայատեղերի մասին։ Ավելի մանրամասներ է հաղորդում ալ-Մասուդին իր «Մուրուջ ազ-զահաբ» գրքում։ Նա ընդգծում է, որ առանձին ցեղեր իրենց ծագումը կապում են Ռաբիաա իբն Նիզարի և Մուդար իբն Նիզարի հետ[56]։ Իսկ «Քիթաբ սթ-թանբիհ վա ալ-իշրաֆ»-ում, նկարագրելով քրդական ցեղերի տեղաբաշխումը խալիֆայության տարբեր մասերում, գրում է, որ «Քուրդ բանիմաց ծերունիները, որոնց հետ հանդիպեցինք մեր հիշատակած երկրներում. հայտնեցին, որ իրենք [ծագումով] Քուրդ իբն Մարդ իբն Սասասա իբն Հարբ իբն Հավազինի սերնդից են։ Նրանցից ոմանք գտնում են, թե իրենք Սուրայ իբն Հավազինի [սերունդն] են... Քրդե-

րից ոմանք գտնում են, թե Ռաբիաայից և Բաբը իբն Վաիլից են...»[57]։ Այդ մասին ուշագրավ են նաև ալ-Մակրիզիի հիշատակությունները։ Նա գրում է, որ քրդական ալ-Մարվանիյա ցեղը գտնում է, որ սերվել է Օմայան դինաստիայի հայտնի զորահրամանատար Մարվան իբն ալ-Հաքամի (մահ. 680 թ.) սերնդից։ Իսկ ալ-Հաքքարիյա ցեղում ոմանք իրենց ծագումը նույնպես սերում են արաբներից[58]։ Նման դատողություններ տեղ են գտել նաև Շարաֆ խան Բիթլիսիի[59] (XVI դ.) և XIX դ. քուրդ հեղինակ Մելա Մահմուդ Բայազիդիի[60] աշխատություններում[61]։

Այսպիսով, չնայած, քրդերի արաբական ծագման վարկածը բավականաչափ տարածվեց մահմեդական միջնադարում, այնուհանդերձ քրդերի էթնիկական ծագման պրոբլեմն արաբական աղբյուրներում մնաց վիճելի և չլուծված։ Արաբ հեղինակների մի այլ խումբ՝ Իբն Կութայբան, աթ-Թաբարին, ադ-Դինավարին, Իբն ալ-Ասիրը, ադ-Դամայրին և այլք դիմելով իրանական դիցաբանության և Սասանյան ավանդության նյութերին, մատնացույց են անում քրդերի իրանական ծագումը։ Առանձին հեղինակներ էլ տատանվել են և կրկնել նախորդներին։ Ուշագրավ է, որ ծագումով քուրդ Այուբբյան դինաստիայի շառավիղներից մեկը՝ հայտնի պատմիչ Աբու ալ-Ֆիդան այս խնդրում ևս չի ծավալվել, որի աշխատությունում թռուցիկ ձևով տեղ են գտել միջնադարյան մի քանի կարծիքներ։ Քրդերին նա մերթ համարել է պարսիկների մի ճյուղ, մերթ արաբ, որոնք, իբր թե հետո դարձել են Նաբաթիներ։ Հետևելով մեկ այլ ավանդության՝ Աբու ալ-Ֆիդան ընդգծում է. «Ասում են, թե քրդերը աջամների արաբներ են» այսինքն՝ իրանական քոչվորներ[62]։ Նույնանման տեղեկություններ է պարունակում Իբն ալ-Վարդիի աշխատությունը[63] և այլն։ Իր երկու աշխատություններում, ի մի բերելով քրդերի ծագման մասին արաբական վարկածները, ալ-Մակրիզին գրում է. «Սրանք ֆակիհների (իմաստուններ, գիտնականներ, օրենսդիրներ) ասածներն են քրդերի մասին, որոնցով նրանք ձգտում են սիրաշահել նրանց (քրդերին,—Ա. Փ.), հենց որ իրենց է պատկանում իշխանությունը (քրդերին,—Ա. Փ.)։ Իրականում քրդերը մի ցեղ են աջամական (իրանական) ցեղերից...»[64]։

Ինչպես տեսնում ենք, արաբական վարկածն իր զանազան տարբերակներով հերքվում է ալ-Մակրիզիի կողմից։ Կիսելով նրա կարծիքը՝ հարկ ենք համարում ավելացնել, որ խնդրո առարկային վերաբերող նյութի պատշաճ մակարդակով հետազոտումը վկայում է այն մասին, որ, իրոք, չի կարող պատահել, որ այն առաջ քաշված լիներ քրդական միջավայրում։ Դա հաստատում է այն հանգամանքը, որ վարկածը ար-

ձայնագրվել է նախ արաբական աղբյուրներում և երկրորդը, ավելի կարևորը, մեզ ներկայացվող տոհմածառերը, ծագումնաբանությունները պարզորոշ ցույց են տալիս, որ դրանք հազիվ թե վաղ միջնադարում ծանոթ լինեին քրդական ցեղերին։ Բացի այդ, վկայակոչությունների շարադրանքից ցցուն ձևով նկատվում է արաբական ոգին և նրան բնորոշ մտածելակերպը։ Մի փաստ, որ թույլ է տալիս ենթադրելու, որ վարկածը զուրկ է ճշմարտությունից և նրա տարբերակների անունները սոսկ մտացածին են։

Ի մի բերելով վերը նշվածը, կարելի է գալ որոշ եզրահանգումների։ Անկասկած քրդերը իբրև իրանալեզու ժողովուրդ սեմական ժողովուրդների հետ չունեն էթնիկական ընդհանրություններ։ Այլ բան է, որ նրանք սեմական ժողովուրդների, մասնավորաբար, արաբների հետ ունենալով փոխադարձ շփումներ, հատկապես եռիսլամական շրջանում, կրել են դրանց ազդեցությունը։ Այլ խոսքով, քրդական առանձին ցեղերի արաբացումը և հակառակ երևույթը սկզբնավորվեց արաբական խալիֆայության ձևավորումից հետո և քուրդ-արաբական փոխհարաբերությունների նոր փուլի սաղմնավորման շրջանում։ Սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ պատմական անժխտելի փաստ է, որ այս ընթացքում հենց քրդերի արաբացման պրոցեսն էր, որ անաղմուկ էր ընթանում, ավելի ինտենսիվ, քան հակառակը։ Այդ պրոցեսը՝ քրդերի արաբացումը, համեմատաբար ավելի արագացավ մոտավորապես X—XI դդ., երբ քրդերի կողմից մասսայական կերպով ընդունվեց իսլամը։ Այս կապակցությամբ արժե շեշտել աշխարհագիր Յակութ ալ-Համավիի հետաքրքիր հիշատակությունը Էրբիլի մասին, որտեղ պարզ գրում է, որ նրա բնակչությունը արաբացած քրդեր են[55]։

Ինչևէ, դարձյալ հարց է առաջանում, թե արաբներին, այդուամենայնիվ, ի՞նչն էր մղում քրդերի արաբական ծագման վարկածն առաջ քաշելուն և մշակելուն։

Այս հարցի պատասխանը պետք է որոնել, մեր կարծիքով, այն պատմական գործընթացների մեջ, որ ապրեց խալիֆայությունն իր գոյության երկար ու ձիգ դարերի ընթացքում։ Հայտնի է, որ Օմայան հարստության անկումից (750 թ.) հետո սկիզբ առավ խալիֆայության քայքայումը։ Դրանով լայն թափ ստացան ժողովրդական շարժումները և ֆեոդալական երկպառակությունները։ Աբբասյան արքունիք և նրա վարչական մարմիններ սկզբից էլ արագորեն ներթափանցեց պարսկական տարրը, որը վարելով խալիֆայության ներքին ու արտաքին քաղաքականությունը՝ նոր լիցք էր հաղորդում իրանական ժո-

ղովուրդների գործողությունների։ Հասարակական-քաղաքական կյանքում լայնորեն կիրառվեցին Սասանյան Իրանի վարչական միջոցառումները, հետևհետե ասպարեզից դուրս էին մղվում Օմայան պետության կարգերը։ Պատահական չէ, որ VIII—IX դդ. արար հեղինակ ալ-Ջահիզը, գրում էր, որ Օմայան պետությունը արաբական էր, իսկ Աբբասյանը՝ իրանական[66]։

IX—X դդ. խալիֆայության ղեկավար մարմիններում նկատելի դարձավ նաև թյուրքական տարրի գործունեությունը[67]։ Իսկ X դ. 40-ական թթ. (945 թ.), երբ պարսիկ Բուիները (իսկ հետո նաև սելջուկները) գրավեցին Բաղդադը և ամբողջ արաբական Իրաքը, Աբբասյան խալիֆաները զրկվեցին աշխարհիկ իշխանությունից, պահպանելով լոկ հոգևոր իշխանությունը։ Դրանով խալիֆայությունը որպես պետական մարմին փաստորեն կորցրեց իր գոյությունը[68]։ Քաղաքական ահա այս բուռն իրադարձությունները նպաստավոր պայմաններ էին ստեղծում քրդական տարրի ակտիվացման համար։

Արաբական սկզբնաղբյուրների նյութերը ցույց են տալիս, որ հատկապես այս խառը ժամանակաշրջանում քրդերը աչքի էին ընկնում անհնազանդությամբ և որոշ շրջաններում վերջ էին տվել արքունիքին ու տեղական կառավարություններին տրվելիք հարկերին[69]։ Հավանաբար այս հանգամանքները ևս երկրորդական դեր չեն խաղացել քրդերին սիրաշահելու, նրանց՝ արաբների հետ նույնացնելու ջանքերի մեջ։ Ի դեպ, պատահական չպետք է համարել նաև այն, որ քրդերի ծագումը որոշ ժամանակահատվածում սերվում էր հատկապես արաբ Ռաբիաա, Մուդդար և Բաքր ցեղերից։

Աբբասյան հարստության տիրապետության շրջանում այդ ցեղային խոշոր միավորումների անունով էին կոչվում Ջազիրայի (Վերին Միջագետք) երեք ստորաբաժանումները՝ Դիյար Ռաբիաա, Դիյար Մուդդար և Դիյար Բաքր[70], որոնք էլ, մեր կարծիքով, կարելի է համարել քրդերի արաբական ծագման վարկածի միջավայրը։

Այստեղ, հատկապես, Դիյար Ռաբիաայում, արաբների հիմնական մրցակիցներն էին քրդերը։ Մեզ հասած տվյալները վկայում են, որ երկու կողմերի փոխհարաբերությունները գլխավորապես պայմանավորված էին նրանց անասնապահական զբաղմունքով և դրա հետ կապված տեղաշարժերով։ Նկարագրելով արաբ Շայբանի ցեղային միության զբաղեցրած տարածքը Դիյար Բաքրում, Հասան ալ-Համադանին (X դ.) ընդգծում է, որ Թուր Աբդինից դեպի Խորասանի նահանգը Շայբանցիների հետ կողք-կողքի բնակվում էին միայն քրդ-

դերը[71]։ Ապա Մուսուլի մարզում արաբական Ռաբիաա և Մուդդար ցեղային միությունների հետ միասին քրդական ալ-Հաքարիյա, ալ-Հումայդիյա, ալ-Ջալալիյա և ալ-Լավիյա ցեղերը ունեին անասնապահական ձմեռանոցներ և ամառանոցներ[72]։ Իսկ երկու Զաբերի միջև ընկած արոտավայրերում և հովիտներում Իբն Հաուկալի վկայությամբ ձմեռում էր քրդական ալ-Հադբանիյա խոշոր ցեղային միությունը, որից հետո այստեղ ամառն էր անցկացնում արաբ Շայբանի ցեղը[73]։ Տնտեսական այս կացութաձևը, անասնապահությունը, ինչպես նշվեց, հարկադրում էր երկու կողմերին լայն շփումներ ունենալ, որը հաճախ ուղեկցվում էր արյունահեղ հակամարտություններով։ Ուստի քրդերի առաջացումը արաբական Ռաբիաա, Մուդդար և Բաքր ցեղային միությունից ոչ միայն կմեղմացներ երկու կողմերի հակասությունները, այլև քրդական միջավայրում կմեծացներ իսլամ տարածողների ռազմաքաղաքական և տնտեսական կշիռը։ Ուշագրավ է այս առթիվ կրկին նշել ալ-Մասուդու այն վկայությունը, որ ամենատարածված և ամենաճշմարիտ տեսակետը քրդերի ծագման մասին այն է, որ նրանք Ռաբիաա իրն Նիզարից են[74]։ Ակնհայտ է, որ այս ցեղային միության անունը կրող Մոսուլ կենտրոնով (Դիյար Ռաբիաա) շրջանում բնակվում էին հիմնականում քրդերը։ Այս փաստը դարձյալ հաստատում է, որ արաբական վարկածը պատահական բնույթ չի կրել և նրա առաջքաշումը ամուր հիմքեր էր ստեղծում քրդական անհնազանդ ցեղերի մեջ իսլամի տարածման և խալիֆայության տարբեր մասերում նրանց արաբական ռազմական գործողությունների մեջ ներգրավելու համար։ Այլ խոսքով, քրդերի արաբական ծագման վարկածի մշակումը և գոյատևումը վերջին հաշվով բխում էր խալիֆայության ներքին ու արտաքին քաղաքականությունից և իսլամի այսպես կոչված «մահմեդականների եղբայրության» սկզբունքներից։ Այն արտացոլում էր նվաճած երկրների ժողովուրդներին միաձուլելու ուղղությամբ արաբների գործադրած շանքերը[75]։ Այս կապակցությամբ ի միջի այլոց հետաքրքիր է ընդգծել, որ արաբ ծագումնաբանները աստվածաշնչային նյութերով փորձեր են կատարել, օրինակի համար, ցույց տալու Կասպից ծովի առափնյա բնակիչների իրանական դայլամների արաբական[76], իսկ հաճախ այլ ժողովուրդների, դրանց թվում նաև պարսիկների սեմական ծագումը[77]։

Ինչ վերաբերվում է քրդերի մեջ վարկածի արձագանքներին, ապա դա կապված է քրդական վերնախավի մի մասի կեցվածքի հետ։ Արաբական ծագումը, նամանավանդ այդ առաջարկում էին իսլամ տարա-

ծողները, կոչված էր նպաստելու քուրդ վերնախավի քաղաքական և տնտեսական դիրքերի ամրապնդմանը։ Այլ խոսքով, ձևականորեն ընդունելով արաբական ծագումը, երբեմն նաև իսլամը, խալիֆայության ճգնաժամային սուր փուլերում քրդական վերնախավը ստանում էր տնտեսական և քաղաքական որոշակի անկախություն։ Քրդերի արաբական ծագման վարկածը կոչված էր մեկ ընդհանուր հունի մեջ դնել այս ժողովրդի ջանքերը հանուն խալիֆայության շահերի, որը մահմեդականության առկայության ղուգընթաց բացասական հետքեր թողեց քուրդ ժողովրդի հասարակական-պատմական զարգացման բնականոն ընթացքի վրա։

А. П. ПОЛАДЯН

К ВОПРОСУ О СРЕДНЕВЕКОВОЙ ВЕРСИИ АРАБСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ КУРДОВ
(по арабским источникам)

Резюме

Для написания настоящей статьи были использованы сообщения арабских и арабоязычных авторов VIII—XV вв. Большая часть этих материалов вводится в научный оборот впервые. Исследование указанных сообщений позволяет автору прийти к выводу о том, что версия об арабском происхождении курдов имела тенденцнозный характер и преследовала определенные цели. В статье выявляются причины возникновения и распространения этой версии, которая, по мнению автора, возникла в среде господствующего народа—арабов во время правления Аббасидов, а затем, в какой-то степени, нашла свое отражение и отклик среди верхушки курдов. Цель этой версии—оправдать господство арабов и способствовать его сохранению и распространению. Эта версия в какой-то степени способствовала также, распространению ислама среди курдов и была использована для их вовлечения в вооруженные силы халифата.

1 Н. Я. Марр, Еще о слове «Челебя». — Записки восточного отделения императорского русского археологического общества, т. XX, вып. II—III, СПГ, 1911, с. 139—140; В. Никитин, Курды, М., 1964, с. 57, V. Minorsky The Kurdistan and Kurds:—„The Encyclopedia of Islam", v. II, London, 1927, p. 1134; محمد امين زكي، خلاصة تاريخ الكرد وكردستان، القاهرة ١٩٣٩، ص ٥٢ م. اورنگ، كردشناسى، تهران، ١٣٤٦، ص ٦٣—٦٧، رشيد ياسمى، كردو پيوستگى نژادي وتاريخى او، تهران، ص ٦، ١١٠—١١٤، رشيد الفيل، الاكراد فى نظر العلم، بغداد، ص ٢٣—٢٧...

2 Г. Б. Акопов, Арабские источники по этнической истории курдов и версии их арабского происхождения: *«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ—արաբական երկրներ», 3. Երևան, 1967, էջ 175—207, տե՛ս նաև* Г. Б. Акопов, Критическая история проблемы происхождения курдов, автореф. док. дис., Ереван, 1969, с. 3—9.

3 *Այդ մասին տե՛ս* Ա. Փոլադյան, *Քրդերի արաբական ծագման միջնադարյան վարկածը, երիտասարդ արևելագետների 7-րդ կոնֆերանսի թեզիսներ, Երևան, 1981 թ.*

4 *Նրա մասին տե՛ս* كتاب الفهرست لابن النديم، تهران، ١٩٧١، ١٠٦، ياقوت الحموي، معجم الادباء، ج ١١، مصر، ص ١٨٠، حاجى خليفة، كشف الظنون، استانبول، ج ١، ١٩٤٤، ص ١٧٩.

5 Ed-Dimichqui, Nukhbat ad-Dahr fi 'Adsháib al—Barr wal Bahr, Leipzig, 1923, p. 255 (*այսուհետև* Ed—Dimichqui); ابن رسول، طرفة الاصحاب في معرفة الانساب، دمشق، ١٩٤٨، ص ٦٣، النويري، شهاب الدين، نهاية الارب في معرفة الادب، ج ١، مصر، ١٩٢٣، ص ٣٥١.

6 „Սk'u"—كرد بن عمر بن عامر بن صعصعة. Ed-Dimichqui, p. 255.

7 „Սk'u"—كرد بن عمر بن عامر ماء السماء. *Նույն տեղում։*

8 „Սk'u"—كرد بن عمر بن مزيقياء. الزبيدى، تاج العروس، ج ٢، القاهرة، ١٣٠٦، ص ٤٨٤.

9 ابن منظور، لسان العرب، ج ٢، القاهرة ١٣٠٠، ص ٧٦

10 Е. А. Беляев, Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, М., 1965, с. 68.

11 ابن رسول، طرفة الاصحاب، ص ٥٧

12 *Նույն տեղում, էջ 19։*

13 „Սk'u"—كرد بن مرد بن عمر بن عامر. Ibn Haukal, Viae et Regna;—„BGA", v. II, Lugd. Bat. Apud. E. J. Brill, 1873, p. 187 (*այսուհետև* Ibn Haukal); al—Idrisi, Opvs Geographicym, f. IV, Neapol-Roma, 1974, p. 419 (*այսուհետև* Al-Idrisi):

14 "واكثر الناس من ينسبهم الى قيس، فيقول مرد بن كرد بن عمرو ابن صعصعة بن معاوية بن بكر بن هوازن بن منصور بن عكرمة بن خصفة بن قيس بن عيلان بن مضر بن نزار بن معد بن عدنان... الزبيدى، تاج العروس، ج ٢، ص ٤٨٥.

15 ابن رسول، طرفة الاصحاب، ص ٦٣

16 "الاكراد ينسبون الى كرد بن مرد بن عمرو بن صعصعة بن معاوية بن بكر بن هوازن. وقيل هم من ولد عمرو مزيقياء بن عامر ماء السماء. وقيل من بنى حميد بن طارق الراجع الى حميد بن زهير بن الحارث بن اسد بن عبد العزى بن قصى بن كلاب...." املقريزى، كتاب السلوك لمعرفة دول الملوك، ج ١، القسم الاول، القاهرة، ١٩٣٤، ص ٣—٤.

17 المقريزى، كتاب المواعظ والاعتبار بذكر الخطط والآثار، ج ٢، مصر، ١٩٧٠، ص ٢٣٢

18 Al-Istakhri, Viae Regnorum,—„BGA", Lugd. Bat. Apud E. J. Brill 1870, p. 114 (*այսուհետև* Al-Istakhri):

10 Ibn Haukai, p. 187, 221:

20 Al-Idrisi, v. IV, p. 419:

21 Տե՛ս الزبيدى، ترصيع القلوب فى ذكر الملوك بنى ايوب، دمشق، ١٩٦٩، ص ٣٦،

22 Նույն տեղում։

23 ابن خلكان، وفيات الاعيان، ج ٢، مصر، ١٢٩٩، ص ١٩٤—١٩٥

24 ابن منظور، لسان العرب، ج ٤، مصر، ١٣٠٠، ص ٣٨٢

25 ابن الوردى، تاريخ، ج ١، مصر، ١٢٥٨، ص ٧٢

26 Abul Fedae, History anteislamica Arabici, 1831, p. 150.

27 ابن خلدون، كتاب العبر و ديوان المبتدأ والخبر، ج ٢، مصر، ١٢٨٤، ص ٣٠٠

28 ابن الحنبلى، در الحب فى تاريخ اعيان حلب، ج ١، القسم الثانى، دمشق، ١٩٧٣، ص ٥١٥—٥١٦.

29 Ed-Dimichqui, p. 247 -255:

30 الفيروزابادى، القاموس المحيط، ج ١، مصر، ١٢٨١، ص ٣٦٣

31 Ibn Batoutah, Voyages, t. II, Paris, 1854, p. 22:

32 Տե՛ս "لعمرك ما كرد من ابناء فارس ولكنه كرد بن عمرو بن عامر..." — ابن خلكان، وفيات الاعيان، ج ٢، ص ١٩٥، ابن منظور لسان العرب، ج ٤، ص ٣٨٢...

33 المسعودى، مروج الذهب ومعادن الجوهر، ج ٢، بيروت ١٩٦٦، ص ٢٤٩

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, էջ 249—251—"فاما اجناس الاكراد وانواعهم فقد تنازع الناس فى بدئهم: فمنهم من رأى انهم من ربيعة بن نزار بن معد بن عدنان من بكر بن وائل... ومن الناس من رأى انهم من مضر بن نزار وانهم من ولد كرد بن مرد بن صعصعة بن هوازن... ومنهم من رأى انهم من ربيعة ومضر... وماقلنا فى الاكراد فالاشهر عند الناس والاصح فى انسابهم انهم من ربيعة بن نزار...."

36 ابن حزم، جمهرة انساب العرب، القاهرة ١٩٦٣، ص ٧—١١

37 Այդ մասին տե՛ս К. Э. Босворт, Мусульманские династии, М., 1971, с. 94—98; Cl. Cahen, Ayyūbids,—„The Enc. of Islam" v. I, London, 1960, p. 796—807; زامباور، معجم الانساب والاسرات الحاكمة فى التاريخ الاسلامى، ج ١، القاهرة، ١٩٥١، ص ١٥٠—١٥٩.

38 Արաբական սկզբնաղբյուրներում եղած նյութերը վկայում են, որ Այուբբյան տոհմածառը եղել է ռավադի քրդերից, որի նախահայրը՝ Շաղին Դվինից (Հայաստանից) մեկնել է Բաղդադ, այնուհետև Թիքրիտ, ուր և սկզբնավորել է նրա

հեանորդների դործունեությունը։ Այուբյանների արաբական ծագմանն առնչվող զանազան կարծիքներ, որոնք չնայած կասկածելի են համարվել, ավանդաբար կրկնել են շատ հեղինակներ։ Այնուամենայնիվ պետք է ասել, որ նրանք ամենից առաջ ընդգծել են միջնադարում գերիշխող տեսակետը՝ նրանց քուրդ լինելու մասին, տպա այլևայլ տեղեկություններով նրանց ծագումը կապել են արաբական այս կամ այն ցեղի և նույնիսկ Օմայան խալիֆաների հետ։ Որոշ հեղինակների հաղորդումները ցույց են տալիս, որ Այուբյան առանձին իշխաններ նույնպես չեն ժխտել իրենց արաբական ծագումը։ Դեռ ավելին, նրանք իբր հայտարարել են, որ հանգամանքների բերումով պարզապես ապրել են քրդերի մեջ և խնամիական կապեր են հաստատել նրանց հետ։ Իհարկե Այուբյանների արաբական ծագումից չբրաժարվելը բնավ զարմանք չի առաջացնում, որովհետև դա հնարավորություն էր տալիս նրանց մահմեդական աշխարհում ընդլայնելու իրենց ռազմաքաղաքական գործունեությունը։ Տե՛ս ابن تغرى بردى، النجوم الزاهرة فى ملوك مصر والقاهرة ج ٦، القاهرة، ١٩٣٦، ص ٣—١٢، ابن خلكان، وفيات الاعيان، ج ٢، ص ٤٩٥، الحنبلى، شفاء القلوب فى مناقب بنى ايوب، بغداد، ١٩٧٨، ص ٢١—٢٣، الزبيدى، زبدة الفلوب، ص ٣٦، المقريزى، كتاب السلوك، ج ١، القسم الاول، ص ٤٠—٤٢، ابن واصل الحمزى، مفرج الكروب فى دولة بنى ايوب، ج ١، ص ٣—٤...։ Արաբական աղբյուրների նյութերի ոչ բազմակողմանի և թերի ուսումնասիրությունը թույլ է ավել ժամանակակից որոշ արաբ պատմաբանների արաբ համարելու ոչ միայն Այուբյան դինաստիան, այլև նրանց ցեղը՝ ռավադի քրդերին։ Տե՛ս تاجى معروف، عروبة العلماء المنسوبين الى البلدان الاعجمية فى بلاد الروم والجزيرة وشهرزور والاربيجان، ج ٣، بغداد، ١٩٧٨، ص ١٠٢—١٠٩։

39 „لما طمى سيل العرم وتفرق اهل اليمن وايدى سبأ" Տե՛ս ed-Dimichqui, p. 255։

40 А Мюллер, История ислама, т. I, СПб. 1895, с. 27—28.

41 А. Е. Беляев, նշված աշխ., էջ 62։

42 Նույն տեղում։

43 А. Мюллер, նշված աշխ., էջ 29։

44 «Աշամ» անվանումն ունի մի քանի իմաստներ։ Սկզբնական շրջանում արաբները աշամ ասելով ի նկատի ունեին ոչ արաբախոս (ոչ արաբ) ժողովուրդներին, հատկապես իրանցիներին, իսկ «Բիլադ ալ-աշամ»—بلاد العجم. (աշամների երկիր) ասելով հասկանում էին Իրանը։

45 «Ֆուրս» բառացի նշանակում է պարսիկներ, ինչպես նաև որոշ կոնտեքստում իրանցի։

46 المسعودى، مروج الذهب، ج ٢، ص ٢٤٩.

47 Ղասսանիների քրիստոնյա արաբական ցեղը ծագումով Եմենից է։ Իշխել է Սիրիայում, Պաղեստինում։ Այս ցեղը գոյատևեց մինչև իսլամի երևան գալը. VII դ.։

48 المسعودى، مروج الذهب، ج ٢، ص ٢٤٩

49 Նույն տեղում։

50 Al-Masudi, Kitab al—Tanbih wal—Ishraf, —„BGA", t. VII, Lugd. Bat. Abud, E. J. Brill, 1894, p. 89 (այսուհետև Al-Masudi).

51 Н. Ф. Пигулевская, Арабы у границ Византии и Ирана в IV—VI вв., М.-Л., 1964, с. 22.

52 كارل بروكلمان، تاريخ الشعوب الاسلامية، بيروت، ١٩٦٨، ص ٢٣

53 Н. Ф. Пигулевская, *Նշված աշխ., էջ 29։*

54 Ibn Hukal, p. 221.

55 Al-istakhri, p. 114.

56 المسعودي، مروج الذهب، ج ٢، ص ٢٥١

57 "وقد ذهب قوم من متأخري الاكراد وذوي الدراية منهم من شاهدناهم فيما ذكرنا من البلاد الى انهم من ولد كرد بن مرد بن صعصعة بن حرب بن هوازن. ومنهم من يرى انهم من سبيع بن هوازن... ومن الاكراد من يذهب انهم من ربيعة ثم من بكر بن وائل..." Al-Masudi, p. 86:

58 المقريزي، كتاب المواعظ، ج ٢، ص ٢٣٢—٢٣٣، المقريزي، ك السلوك، ج ١/١، ص ٣

59 Шараф-хан Бидлиси, Шараф-наме, т. I, М., 1967, с. 83, 152, 167, 175, 220, 232, 290, 313, 357, ...

60 М. М. Баязиди, Нравы и обычаи курдов, М., 1963, с. 9—10. *Տե՛ս բնագիրը էջ 202։*

61 *Այս կարգի պնդումները, ինչպես նշում է Վ. Մինորսկին, շարունակում են դեռևս գոյատևել քրդական որոշ ցեղերում և հատկապես նրանց ղեկավար ընտանիքներում։ Տե՛ս* В. Ф. Минорский, Заметки и впечатления, СПб., 1915, с. 14

Քրդերի արաբական ծագման վարկածը, որքան էլ տարօրինակ է, տարածում գտավ նաև քուրդ ժողովրդի տարադավան հատվածներից մեկի՝ եզդիական համայնքում։ Դարեր ի վեր կրոնական համոզմունքների հողի վրա թշնամաբար տրամադրված լինելով մահմեդականությանը և մահմեդական ժողովուրդներին, դրանց թվում քուրդ մահմեդական հատվածին, եզդիների մեջ շարունակում է գոյատևել այն միտքը, որ իրենք ծագումով արաբ Օմայան տոհմի խալիֆաներից են։ Օմայանների և նրանց տարբեր ճյուղերի ու "միշնադարյան արաբ այլևայլ բարձրաստիճան ընտանիքների հետ են կապում իրենց ծագումը եզիդի հոգևորական իշխող դասերը։ Եզիդի քրդերի և Օմայան խալիֆաների ազգակցական կապը արտացոլվել է նաև եզդիական «Մսահաֆե ռաշ» (սև մատյան) սուրբ գրքույկում։ Տե՛ս سماعل بگ چول، اليزيدية، قديما وحديثا، بيروت، ص ١٣، ٧٧ سعيد الديوه‌چي، اليزيدية، بغداد، ١٩٧٣، ص ١٥—٧٤، ٣٤٧، صديق الدملوجي، اليزيدية، الموصل، ١٩٤٩، ص ٣٣—٦٣...

62 Abul Fedae, p. 150:

63 ابن الوردي، تاريخ، ج ١، ص ٧٢

64 *Տե՛ս* المقريزي، كتاب الاعتبار، ج ٢، ص ٢٣٢

65 ياقوت الحموي، معجم البلدان، ج ١، بيروت ١٩٥٥، ص ١٣٨

66 الجاحظ، البيان والتبيين، ج ٢، بغداد، ١٩٦٠، ص ٦٤

67 К. Э. Босворт, Нашествия варваров: появление тюрок в мусульманском мире: — «Мусульманский мир 950—1150», М., 1981, с.20—33: *Տե՛ս նաև* كارل بروكلمان، تاريخ الشعوب الاسلامية، ص ٢٤٥—٢٤٦:

68 И. Петрушевский, Развитие феодального общества в Иране (X—нач. XIII вв.) —«История Ирана», М., 1977, с. 134.

69 Вторая записка Абу Дулафа, М., 1960. с. 18.

70 „The Enc. of Islam" v. II, London *1965, թ. 343—349։ Ջազիրան, որտեղ, ինչպես նշվեց, արաբական ցեղերը հաստատվել էին նախաիսլամական շրջանում և արաբ աշխարհագիրները այն բաժանում էին երեք քուրաների։ մտնում էր խալիֆայության հյուսիսային փոխարքայության կազմի մեջ։ Այդ փոխարքայությունը ընդգրկում էր Արմինիան (Հայաստան, Վիրք, Աղվանք, Շիրվան, Դարբանդ), Ատրպատականը, Վերին Միջագետքը և Փոքր Ասիայի սահմանամերձ շրջանները։ Ամբողջ Ջազիրայի մայրաքաղաքն էր Մոսուլը։ Աբբասյանների օրոք այն բաժանվեց վարչական երկու բաժանումների՝ Մոսուլ (ալ-Մաուսիլ) և Ջազիրա։ Տե՛ս* Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական խալիֆայության հյուսիսային փոխարքայությունը.—«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 3, արաբական երկրներ, Երևան, 1967 թ., էջ 164։ Տե՛ս նաև նրա* Армения и арабский халифат, Ереван, 1977, с. 152:
Արաբական նվաճումներից սկսած դեպի այս տարածքը սկսվեցին արաբական ցեղերի նոր արտագաղթեր։ Նրանցից մի մասը Օմար խալիֆայի օրոք (634—644 թթ.) ակտիվորեն մասնակցություն հանդես բերեց նվաճումներին։ Ջազիրայում արաբական ցեղերի քաղաքական ու տնտեսական կշիռը մեծացավ Օմայյանների օրոք, երբ վերջիններիս կողմից սկսվեց Միջագետքի գաղութացումը։

71 حسن الهمذانى، وصف جزيرة العرب، القاهرة، ١٩٥٣، ص ١٣٣

72 Ibn Hukal, p. 114:

73 Նույն տեղում, էջ 156։

74 المسعودى، مروج الذهب، ج ٢، ص ٢٥١

75 Նման երևույթ նկատվում է նաև մեր օրերում։ Իր ճառերից մեկում ժամանակին Իրաքի պրեզիդենտ Աբդ ալ-Քարիմ Կասիմը բացեիբաց հայտարարություն է արել քրդերի և արաբների նույն ծագման մասին։ Տե՛ս الحزب الشيوعي العراقي. المسألة الكردية، بغداد، ١٩٧٣، ص ٣٩.

76 Ed-Dimichqui, p. 254—255:

77 Նույն տեղում։